

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ, ԲՆԱԿԱՆՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Հանձնարարականի կատարվելիք աշխատանքների և միջոցառումների համառոտ նկարագիրը	Կատարման պատասխանատուն	Համակատարողը	Ժամկետը	2017թ. ֆինանսավորման աղբյուրը և պահանջվող գումարը	2017թ. աշխատանքների և միջոցառումների կատարման ընթացքը
<b>1 <u>Կառավարման համակարգի կատարելագործում</u></b>							
1.1	«Սևան Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման համակարգի	1) Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի գետերի ջրերի աղտոտվածության մոնիթորինգի իրականացում, միջոցառումների մշակում	ՀՀ բնապահ պանության նախարարություն	ՀՀ առողջապահության նախարարություն  ՀՀ գիտությունների ազգային	2017թ. և շարունակական	«Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կատարվող «Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության	ՀՀ ԲՆ <u>«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ը</u> «Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի ծառայություններ» ծրագրի շրջանակներում Սևանա լճում և ջրհավաք ավազանում իրականացրել է.  <b>Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգ՝</b> մայիս ամսին: Լճի ջրի որակի ուսումնասիրության համար վերցվել է

	կատարելագործում			ակադեմիա (համաձայնությամբ)	վիճակի մոնիթորինգի ծառայություններ» ծրագրի շրջանակներում:	<p>ջրի 50 փորձանմուշ (փորձանմուշներ վերցվել են ինչպես լճի մակերեսից, այնպես էլ խորքային շերտերից՝ 2, 5, 10, 20, 30մ խորություններից), որոնցից յուրաքանչյուրում որոշվել է միջին հաշվով 40-ական ցուցանիշ: Ընդհանուր առմամբ որոշվել է ջրի քիմիական որակի 2000 ցուցանիշ:</p> <p><b>Սևանա լիճ թափվող գետերի աղտոտվածության մոնիթորինգ.</b></p> <p>Սևանա լճի ավազանի գետերի ջրի որակի մոնիթորինգն ըստ ծրագրի (մոնիթորինգի տարեկան ծրագիր) իրականացվել է մարտ, ապրիլ, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին 10 գետի (Ձկնագետ, Մասրիկ, Սոթք, Կարճաղբյուր, Վարդենիս, Մարտունի, Արգիճի, Ծակքար, Շողվակ, Գավառագետ) և Արփա-Սևան թունելի 19 մոնիթորինգային դիտակետում: 2017 թվականի ընթացքում վերցվել է ջրի 116 փորձանմուշ: Ընդհանուր առմամբ որոշվել է 4985 ջրի քիմիական որակի ցուցանիշ:</p> <p style="text-align: right;">Սևանա լճի ավազանի</p>
--	-----------------	--	--	----------------------------	---	---

						<p>մոնիթորինգի արդյունքում ստացված տվյալները վերլուծվել և ամփոփվել են «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի ամենամսյա տեղեկագրերում և հրապարակվել ՀՀ բնապահպանության նախարարության (www.mnp.am) և ՊՈԱԿ-ի (<a href="http://www.armmonitoring.am">www.armmonitoring.am</a>) պաշտոնական ինտերնետային կայքերում:</p> <p><u>ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ -</u>  էնդեմիկ ձկնատեսակների համար հիմնական ձվադրավայր հանդիսացող՝ Ձկնագետ, Գավառագետ, Լիճք, Արգիճի, Վարդենիս, Մակենիս և Մասրիկ գետերի հատակային ֆաունայի ուսումնասիրություններ: Արդյունքում՝ <b>Ձկնագետի</b> ողջ երկայնքով հանդիպող զգայուն տեսակների առկայությունը վկայում է գետի էկոհամակարգի համեմատաբար լավ վիճակի մասին, գետի ոչ միայն վերին, այլև միջին և ստորին հոսանքներում գրանցվել է լավ էկոլոգիական վիճակ: Վերջինս, հավանաբար, գետի հարևանությամբ տեղաբաշխված գյուղերում իրականացվող աղբահանության</p>
--	--	--	--	--	--	---

						<p>արդյունք է: 2017թ. <b>Գավառագետի</b> վերին հոսանքում բնակչության կողմից մշտապես իրականացվող ջրառի պատճառով գետի հունը գրեթե ցամաք է, ինչի պատճառով զոոբենթոսի նմուշառում չի կատարվել: Միջին հոսանքում լավ զարգացած են մակրոֆիտները, որոնք սնունդ, ապրելավայր ու թաքստոց են հանդիսանում ֆիտոֆիլ կենդանիների համար: Հունի բնական կառուցվածքը փոփոխված է հիդրոէկոհամակարգը անընդհատ ենթարկվում է մարդածին տարբեր գործոնների բացասական ազդեցությանը: Գավառ քաղաքի կոյուղաջրերի մաքրման կայանը իրականացնում է միայն մեխանիկական մաքրում, ինչը բավարար չէ Գավառագետի էկոհամակարգի վերականգնման համար: <b>Մասրիկ</b> գետը վերջին 6-7 տարիների ընթացքում ենթարկվել է անընդհատ աճող մարդածին գործոնի ազդեցությանը (հանքերի շահագործում, ՀԷԿ-ի և ոռոգման համար կատարվող ջրառ, օրգանական աղտոտում, հունի փոփոխում): Բոլոր ուսումնասիրված դիտակետերում ջրի որակը</p>
--	--	--	--	--	--	---

						<p>համապատասխանել է «ոչ բարձր որակ» դասին: <b>Արգիճի</b> գետի ջրի որակը վերին և ստորին հոսանքներում համապատասխանել է «լավ որակ» դասին, իսկ միջին հոսանքում՝ «ոչ բարձր որակ» դասերին: Հավանաբար, այսպիսի իրավիճակի առաջացման գործում որոշիչ դեր է խաղում Մադինա գյուղի շրջանում ՀԷԿ-ի համար կատարված ջրառը և ստորին հոսանքում ջրթափի գործոնը: Ստացված տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ գետային էկոհամակարգը համեմատաբար լավ վիճակում է: <b>Կարճաղբյուր</b> գետի ջրի որակը վերին հոսանքից մինչև ստորին հոսանք աստիճանաբար փոխվում է «բարձր»-ից մինչև «ոչ բարձր» որակի: Գետի էկոհամակարգի վրա ազդող գործոններից են՝ ոռոգման համար կատարվող ջրառը, գյուղի հոսքաջրերով և կենցաղային աղբով աղտոտումը, ՀԷԿ-ը: Սևանա լճի ձկնատեսակների լճից գետ միգրացիայի խոչնդոտներից է նաև ձկնագողությունը: Վերջին 5 տարիների ընթացքում գետի միջին և ստորին հոսանքներում նկատելի կրճատվել են կողալողերի քանակական</p>
--	--	--	--	--	--	---

						<p>ցուցանիշները: Ջրի որակի լավացման և ձկների համար կեր հանդիսացող զոոբենթոսի քանակական և որակական ցուցանիշների վերականգնման համար անհրաժեշտ է խստացնել ջրառի նկատմամբ վերահսկողությունը: Տարբեր տարիների համեմատությունը ցույց է տալիս, որ կախված գետի ջրայնությունից կենսաբազմազանության և բիոտիկ ինդեքսների արժեքները փոխվում են: Կարճադրյուր գետի էկոհամակարգի վիճակը կարելի է համարել համեմատաբար լավ: <b>Լիճք</b> գետի ստորերկրյա սնուցման և, հետևաբար, կայուն ջերմաստիճանի, ինչպես նաև լուրջ աղտոտման աղբյուրների բացակայության շնորհիվ հատակային անողնաշարավորների համակեցության ցուցանիշները տարեցտարի գրեթե անփոփոխ են: Ստացված տվյալների հիման վրա կարելի եզրակացնել, որ գետի էկոհամակարգը լավ վիճակում է: <b>Վարդենիս</b> գետը հարուստ է էնդեմիկ ձկնատեսակների սնունդ հանդիսացող տեսակներով և հանդիսանում է ձկների կարևորագույն ձվադրավայրերից մեկը: Խոչընդոտներից են՝ վերին հոսանքում</p>
--	--	--	--	--	--	---

						<p>կառուցված ՀԷԿ-ը, ջրի բացակայությունը ձկնանցարանում, ինչպես նաև օրգանական աղտոտվածության խնդիրը ստորին հոսանքում:</p> <p style="text-align: center;"><i>ԵՋՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</i></p> <p>Ուսումնասիրված 7 գետերից հինգի՝ <b>Ձկնագետ, Լիճք, Արգիճի, Վարդենիս և Կարճաղբյուր</b> վերին հոսանքներում գրանցվել են բիոտիկ EBI (Extended Biotic Index) ինդեքսի բարձր ցուցանիշներ (8-10 միավոր), ինչը համապատասխանում է «բարձր»-ից «լավ» ջրի որակի դասերին: Այստեղ գրանցվել է նաև Սևանա լճի էնդեմիկ ձկնատեսակների համար արժեքավոր կեր հանդիսացող հատակային անողնաշարավորների մեծ կենսազանգված (5,3-ից մինչև 10,9 գ/մ<sup>2</sup> նշված գետերի վերին հոսանքում) և (3.1 -ից մինչև 47,6 գ/մ<sup>2</sup> նշված գետերի միջին հոսանքում):</p> <ul style="list-style-type: none"> <li>• <b>Ձկնագետ, Վարդենիս և Կարճաղբյուր</b> գետերի վերին և միջին հոսանքներում գրանցվել են զոոբենթոսի Շենոն-Վայների կենսաբազմազանության ինդեքսի ամենամեծ արժեքները (3,3 -2,8 միավոր), ինչը վկայում է էկոհամակարգի հավասարակշռված վիճակի մասին:</li> <li>• <b>Գավառագետի</b> վերին հոսանքը, որն աչքի էր ընկնում իր տեսակային</li> </ul>
--	--	--	--	--	--	---

						<p>բազմազանությամբ և ջրի բարձր որակով, տարվա ընթացքում անընդհատ ենթարվում է մարդկային գործունեության բացասական ազդեցությանը, որոնցից ամենալուրջ վնասը հասցնում է անկառավարերի ջրառը:</p> <ul style="list-style-type: none"> <li>• <b>Վարդենիս, Կարճաղբյուր, Արգիճի և Մասրիկ</b> գետերի ողողահուններում գտնվող մշակովի դաշտերի ոռոգման, ինպես նաև ՓՀԷԿ-երի համար կատարվող ջրառի պատճառով միջին հոսանքներում նկատվում է ջրայնության նվազում, ընդհուպ մինչև հունի չորացում: Ջրի ջերմաստիճանի բարձրացման և լուծված թթվածնի պարունակության փոքրացման հետևանքով գետի զոոբենթոսի կազմից անհետանում են զգայուն տեսակները, էկոհամակարգում տեղի են ունենում էվտրոֆացման երևույթներ: <p>Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել, որպեսզի Սևանա լճի ջրհավաք ավազանի գետերի վրա տեղադրված ՓՀԷԿ-երի ձկնանցարարները չխոչընդոտեն ձկների միգրացիային:</p> <ul style="list-style-type: none"> <li>• <b>Մասրիկ</b> գետի ավազանում, բացի Սոթքի հանքավայրից, ակտիվ հողային աշխատանքներ և հունի փոփոխություններ են իրականացվում Մասրիկի ակունքի հատվածներում, ինչը նույնպես լուրջ խոչընդոտ է էնդեմիկ</li> </ul> </li></ul>
--	--	--	--	--	--	---



						<p>ձկնատեսակների բազմացման համար:</p> <ul style="list-style-type: none"> <li>• <b>Գետերի</b> ստորին հոսանքները գտնվում են մշտական անթրոպոգեն ազդեցության ներքո, քանի որ իրենց վրա են կրում հարակից բնակավայրերի տնտեսական և կենցաղային գործունեության ազդեցությունը: Գետերի այդ հատվածների հատակային ֆաունայի որակական և քանակական ցուցանիշները կտրուկ նվազում են գետը աղտոտող կենցաղային աղբի և հոսքաջրերի ազդեցության պատճառով:</li> <li>• Ձկների միգրացիան դեպի ձվադրավայրեր հնարավոր է <b>Կարճաղբյուր, Ձկնագետ և Լիճք</b> գետերում: <b>Մասրիկ</b> գետի ավազանում որպես ձկների ձվադրավայր կարող է ծառայել Ակունք վտակի վերին հոսանքը:</li> <li>• <b>Կարճաղբյուր</b> գետի ստորին հոսանքի երկու ճյուղերի միացումը հնարավորություն կտա բարելավել այդ հատվածի ջրի որակը:</li> </ul> <p>(Ծավալուն հաշվետվությունը (89 թերթ) ներկայացվել է ՀՀ բնապահպանության նախարարություն)</p>
	2) Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում հիդրոկենսաբանական և հիդրոօդերևութաբանա	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, «Հայպետհիդրոմետ» ՊՈԱԿ-ի կողմից 2017թ. ընթաց	<p><u>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության</u> Հիդրոմետ ծառայության կողմից իրականացրել է Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում <b>հիդրոօդերևութաբանական</b></p>	

		կան մոնիթորինգի իրականացում				<p>քում կատարման ենթակա պետական նշանակության հիդրոօդերևութաբանական աշխատանքների ծրագրին համապատասխան</p>	<p><b>մոնիտորինգ՝</b> կատարվել են լճի ջրի մակարդակի, ջերմաստիճանի, թափանցելիության, սառցային երևույթների և գոլորշացման դիտարկումներ, գետերով, Արփա-Սևան թունելով Սևանա լիճ մուտք գործած և ոռոգման նպատակով լճից բաց թողնված ջրաքանակների հաշվառում: Ստացված տեղեկատվությունն ամեն օր հաղորդվել է շահագրգիռ կազմակերպություններին, այդ թվում ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովին:</p> <p>Ամիսը մեկ անգամ, էքսպեդիցիոն կարգով, լճի հայելու ֆիքսված կետերում ստանդարտ խորությունների վրա կատարվել են ջրի ջերմաստիճանի, ալիքի բարձրության ու ջրի թափանցելիության չափման աշխատանքներ: Սևանա լճի վրա, նավի միջոցով առնվազն ամիսը մեկ անգամ կատարվել է ջրի ջերմաստիճանի տարբեր խորություններում՝ ալիքի բարձրության և ջրի թափանցելիության սահմանի վերաբերյալ չափման աշխատանքներ: Սևանա լճի ավազանի 2 կայաններում /Մարտունի, Վարդենյաց լեռնանցք/ շուրջօրյա, 4 ժամը մեկ</p>
--	--	-----------------------------	--	--	--	--	---

						<p>անգամ կատարվել են գոլորշիացման դիտարկումներ: Սևանա լճի 4 դիտակետերում /Սևան, Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի/ յուրաքանչյուր 12 ժամը մեկ կատարվել է լճի մակարդակի և ջերմաստիճանի դիտարկումներ: Համապատասխան ժամանակահատվածում ամեն օր՝ սառցային երևույթների դիտարկումներ, համապատասխան ժամանակահատվածում սառցի հաստության չափումներ:</p> <p>2017թ. փետրվարի 17-ից մինչև մարտի 27-ը ներառյալ լիճը համատարած սառցածածկված է եղել: Սառցածածկի հաստության դիտարկումների վերաբերյալ տվյալներն ըստ անհրաժեշտության տրամադրվել է համապատասխան մարմիններին:</p> <p>Մարտի երրորդ տասնօրյակում հանրապետության ղեկավար մարմիններին, ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովին և այլ կազմակերպություններին տրամադրվել է Սևանա լճի մակարդակի կանխատեսում 2017թ. հուլիսի 1-ի համար (1900.95-1901.00մ սահմաններում) և</p>
--	--	--	--	--	--	---

						<p>2017թ. դեկտեմբերի 31-ի համար: Պայմանավորված «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, ինչպես նաև սեզոնային հիդրոոդերևութաբանական պայմանների կանխատեսմամբ հուլիսի 11-ին և հոկտեմբերի 28-ին վերանայվել է 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լճի մակարդակի փոփոխության կանխատեսումը և տրվել է ճշգրտում, համաձայն որի 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը կանխատեսվել է 1900.41-1900.45մ սահմաններում, որը 2017 թվականի հունվարի 1-ի համեմատ ցածր կլինի 1-ից 5 սմ-ով:</p> <p><u>ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի</u> Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի կողմից հետազոտվել են՝ Սևանա լճում և գետերում հիդրոբիոնտների կենսապայմանները, մասնավորապես ձկների կերային բազան (պլանկտոն-</p>
--	--	--	--	--	--	--

						<p>զոո, ֆիտո, բենթոս-զոո, ֆիտո, մակրոֆիտներ), տրոֆիկ փոխհարաբերությունները և միջավայրի այն գործոնները, որոնք պայմանավորում են կենսառեսուրսների զարգացման առանձնահատկություններն ու փոփոխման դինամիկան: Կատարվել է նաև Սևանա լճում օտարածին ձկնատեսակների ուսումնասիրություն և էկոհամակարգում դրանց դերի բացահայտում: <i>Ֆիտոպլանկտոն՝ 2017թ.</i> (գարուն-աշուն ժամանակահատված) իրականացվել է Սևանա լճի Մասրիկ, Կարճաղբյուր, Վարդենիս, Արգիճի, Լիճք, Գավառագետ և Ձկնագետ գետերի ֆիտոպլանկտոնային համակեցության որակական և քանակական ցուցանիշների հետազոտություն: Նմուշառումը կատարվել է գետերի վերին, միջին և ստորին հոսանքներից: Հետազոտությունների արդյունքում գետերում արձանագրվել է դիատոմային, կանաչ, կապտականաչ, դեղնականաչ և էվգլենային ջրիմուռների 144 տեսակ: Տեսակային բազմազանությամբ գերակայել են դիատոմային (60%) ջրիմուռները, Ենթադոմինանտ են եղել կապտականաչները: Համակեցության</p>
--	--	--	--	--	--	--

						<p>տեսակային կազմում մեծ մասնաբաժին են ունեցել նաև կանաչ ջրիմուռները: Էվգլենային և դեղնականաչ ջրիմուռներից արձանագրվել է 4-ական տեսակ: 2016թ գրանցված արդյունքների համեմատ գետերում դիտվել է դեղնականաչ ջրիմուռների տարածական և քանակական ընդլայնում: Առանձին դիտակետերում ֆիտոպլանկտոնային համակեցության միջին թվաքանակը տատանվել է 66 000 – 1 100 000 բջ/լ, իսկ կենսազանգվածը՝ 0.15 - 1.58 գ/մ<sup>3</sup> սահմաններում: Հիմնականում գետերում հոսանքն ի վար արձանագրվել է ֆիտոպլանկտոնի քանակական և որակական ցուցանիշների ավելացում: Շենոնի բազմազանության միջին ցուցանիշի արժեքները առանձին դիտակետերում տատանվել են 1.4 – 2.7, սապրոբայնության ինդեքսի միջին արժեքները՝ 1.3-1.9 սահմաններում: Օրգանական աղտոտվածության մակարդակը հետազոտված գետերում եղել է <math>\alpha</math>-<math>\beta</math>-մեզոսապրոբ մակարդակներում: <i>Մակրոֆիտներ</i>՝ իրականացվել են մակրոֆիտների տարածվածության, տեսակային կազմի, պրոեկտիվ ծածկույթի</p>
--	--	--	--	--	--	---

						<p>ուսումնասիրություններ:</p> <p>Հետազոտությունների համար որպես նյութ ծառայել են Սևանա լիճ թափվող 7 գետերից վերցված մակրոֆիտների բուսանմուշները: Մակրոֆիտները հանդիսանում են ջրային կենդանիների համար բնադրավայր, ձկների համար թաքստոց և ձվադրավայր: Մակրոֆիտների բուսուտներում ձևավորվում են ջերմաստիճանային բարենպաստ պայմաններ, որը նպաստում է անողնաշարավորների բազմացմանը: Այսպիսով, 2017թ Սևանա լճի ավազանի գետերում գրանցվել են 32 բուսատեսակ, որոնցից 14-ը հիդատոֆիտ, 6-ը հելոֆիտ, 5-ը հիգրոհելոֆիտ և 7-ը հիգրոֆիտ: Հանդիպման հաճախականությամբ գետերում գերիշխել է <i>Batrachium kauffmannii</i> տեսակը: Մակրոֆիտների բազմազանությամբ աչքի է ընկել Արգիճի գետի միջին հոսանքը, որը, դանդաղորեն հոսելով հարթավայրով, ձևավորել է տղմավազային բնահող, հարստացել ավերից գետ լցվող հոսքաջրերով՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով մակրոֆիտների բուռն աճի համար: Սևանա լիճ թափվող գետերի</p>
--	--	--	--	--	--	---

						<p>ուսմնասիրությունների արդյունքներից ելնելով, կարելի է եզրակացնել, որ վերը նշված գետերում անթրոպոգեն ազդեցության հետևանքով (հողաշինարարական աշխատանքներ, ավելացող ՓՀԷԿ-եր, ջրառ ոռոգման նպատակով) փոխվում են հիդրոբիոտոնների կենսապայմանները, որն էլ բացասաբար է անդրադառնում գետի կենսաբազմազանության, ջրային կենդանիների և բույսերի բազմացման և զարգացման վրա:</p> <p>(Ծավալուն հաշվետվությունը (89 թերթ) ներկայացվել է ՀՀ բնապահպանության նախարարություն)</p>	
		<p>3)«Սևան» ազգային պարկ»-ի ռեկրեացիոն գոտում հանրային լողափի կազմակերպում</p>	<p>ՀՀ բնապահ պանության նախարարություն</p>	<p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p> <p>ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p>«Սևան»</p>	<p>2017թ. և շարունակական</p>	<p>«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի սեփական միջոցների և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին</p>	<p>ՀՀ կառավարության 28.04.2011թ.-ի N527-Ն, 07.06.2012թ.-ի N752-Ն և 01.10.2015թ.-ի N1122-Ն որոշումների համաձայն ստեղծվել է թվով 8 հանրային լողափեր՝ Սևան, Լճաշեն, Ծովազարդ, Նորատուս, Ծովազյուղ և Դրախտիկ համայնքներին հարակից ափամերձ հատվածներում՝ ընդհանուր 28.16 հա մակերեսով: Լողափերի ափի ընդհանուր երկարությունը կազմում է 1846 մետր:</p> <p>Թվով 8 հանրային լողափերից լողափնյա պարագաներով (տապչաններ, հովանոցներ,</p>



				<p>ազգային պարկ»- ՊՈԱԿ-ի (համաձայն նությամբ)</p> <p>ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ համայնք (համաձայն նությամբ)</p>		<p>զուգարաններ, խաղահրապարակներ, ավտոկայանտեղիներ, հանդերձարաններ, նստարաններ, բուժկետ, փրկարարական կետ) կահավորված են միայն 3-ը՝ N 1,2,3-ը:</p> <p>Ծովագյուղ համայնքի հարակից տարածքում գտնվող N8՝ 9.0 համակերեսով լողափի նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմված են, սակայն լողափը կահավորված չէ՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Մնացած 4 լողափերը կահավորված չեն, սակայն մուտքերի մոտ տեղադրված են ուղղորդող ցուցանակներ:</p> <p>Բացի ՀՀ կառավարության որոշումներով ստեղծված լողափերից, «Սևան» ազգային պարկի տարածքում կա առանձնացված ևս 3 լողափ, որից 2-ը Շորժա համայնքին հարակից հատվածում (1-ը՝ երկաթ գծի կայարանի հարևանությամբ՝ մոտ 0.4 հա, որը կահավորված է հանդերձարաններով, սանհանգույցով, ինչպես նաև առանձնացված է ավտոկանգառ, իսկ մյուսը՝ դեպի նկարիչների պանսիոնատ տանող ճանապարհի հարևանությամբ՝ մոտ 0.6 հա), իսկ 3-րդը ստեղծվել է 2017</p>
--	--	--	--	---	--	--

							<p>թվականին Մարտունի համայնքի միջոցներով և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի աջակցությամբ՝ Մարտունի համայնքին հարակից հատվածում՝ մոտ 2.0 հա մակերեսով:</p> <p>Այսպիսով «Սևան» ազգային պարկի տարածքում առանձնացված է 11 հանրային լողափ՝ շուրջ 31.16 հա մակերեսով:</p> <p>«Սևան» ազգային պարկի հանրային լողափերում 2017 թվականի օգոստոս ամսին հանգստացողների թիվը օրեկան միջինը կազմել է 4200-4700 մարդ, առանձին օրերին հասել է մինչև 7000 մարդու (ըստ Սևան համայնքի տուրիստական տեղեկատվական կենտրոնի տվյալների):</p>
--	--	--	--	--	--	--	--

**2. Սևանա լճի ջրհավաք ավազանի բնապահպանական և բնօգտագործման գործառույթների կատարելագործման միջոցառումներ**

2.1	Սևանա լճի ջրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման	Լճի շրջակայքի շուրջ 93 հա անտառաշերտերի մաքրում	«Բնապահ պանության նախարարություն	«Գեղարքունիքի մարզպետարան	2017թ. և շարունակական	«Կետական բյուջե՝ 85,400,0 հազ. դրամ, որից Սահմանված ընթացակարգով կնքվել է ջրածածկ	2017թ. նախատեսված 93 հա անտառ մաքրման աշխատանքների համար հայտարարված մրցույթներ չեն կայացել, սակայն «Կառավարության 24.08.2017թ N1050-Ն որոշման համաձայն պետբյուջեից հատկացված
-----	---	---	----------------------------------	---------------------------	-----------------------	---	---

	աշխատանքների իրա կանացում					<p>անտառտնկարկներ ի գույքագրման 775.0 հազ. դրամի ծառայությունների մատուցման պայմանագիր և 750.0 հազ. դրամի տեխնիկական հսկողության ծառայությունների պայմանագիր, իսկ 83,875.0 հազ.դրամը՝ «Սևանա լճի ջրա ծածկ անտառտն կարկների մաքրման ծառայություններ» ծրագրի շրջանակներում</p>	<p>միջոցների հաշվին «Սևան» ազգային պարկի ջրածածկման ենթակա տարածքներից 2017 թվականին մաքրվել է <b>78.1 հա</b> անտառածածկ տարածք, որից <b>64 հա</b>-ը պետբյուջեից հատկացված միջոցներով (83.875 մլն դրամ)՝ մաքրվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից, <b>14.1 հա</b>-ը՝ ֆիզիկական անձանց կողմից՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ կնքված ջրածածկի ենթակա անտառների մաքրման պայմանագրերով: 2017 թվականին մաքրման աշխատանքները իրականացվել են աննախադեպ բարձր որակով, ծառերի և կոճղերի հետ միասին հեռացվել է նաև օրգանական նյութերով հարուստ հողաշերտը: <u>«Չեղարքունիքի մարզպետարանը»</u> որպես համակատարող աջակցել է Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքներին:</p>
2.2	Սևանա լճի շրջակայքում նոր անտառշերտի հիմնում	Լճի շրջակայքի շուրջ անտառշերտի հիմնում	«Չեղարքունիքի մարզպետարան»	«Չեղարքունիքի մարզպետարան»	2017թ.և շարունակական	«Չեղարքունիքի մարզպետարան» կողմից հաշվին	<p><u>«Չեղարքունիքի մարզպետարանը»</u>, որպես համակատարող աջակցել է Սևանա լճի շրջակայքում անտառտնկման աշխատանքներին: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Մարտունու և Սևանի մասնաճյուղերում</p>

							իրականացվել է 8.18 հա անտառտնկման աշխատանքներ (որից Մարտունու մասնաճյուղում՝ 3.18 հա, Սևանի մասնաճյուղում՝ 5 հա) և 38644 հատ ծառի կոճղաշիվերի հատում:
2.3.	Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում ջրի տակ մնացած շինությունների ու ենթակա կառուցվածքների մաքրում	Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում ջրի տակ մնացած շինությունների ու ենթակա կառուցվածքների մաքրում	«Քնապահ պանության նախարարություն»	«Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողով (համաձայնությամբ)»	2017թ.և շարունակական	«Օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին»	<p><u>«Քնապահպանության նախարարություն»</u> Սևանա լճի շրջակայքի ջրածածկման ենթակա տարածքներում 2017թ. ընթացքում ապամոնտաժվել են 39 միավոր շինություններ և ենթակառուցվածքներ, որից</p> <ul style="list-style-type: none"> <li>• Սևանի տարածքում 30 միավոր</li> <li>• Գավառի տարածքում 4 միավոր</li> <li>• Ճամբարակում տարածքում 5 միավոր:</li> </ul> <p><b>Ապամոնտաժված շենք-շինություններ</b> Ընդհանուր հաշվառված 4729 ապօրինի շինություններից 2006 թվականից ապամոնտաժվել է ընդամենը 831 շինություն, որից միայն 2017 թվականին ապամոնտաժվել են թվով 186 շինություններ՝ 60 հատ ավիամերձ տարածքի տնակներ, 9 հատ մայրուղու հարևանությամբ գտնվող տնակներ, 1 հանգստի գոտի ամբողջությամբ (ներառյալ 2 հատ 1հարկանի և 1 հատ 2 հարկանի քարե հանգստյան տներ, 1 քարե պարիսպ՝ 210</p>

							<p>գծմ, h=2մ), 98 հատ բետոնե հիմքերով տաղավարներ, 5 հատ ինքնաշեն սանհանգույց: Ապամոնտաժվել և տարածքից դուրս են բերվել նաև 3 տարածքների ցանկապատեր, 1 մեքենայի կարկաս:</p> <p>2016-2017 թվականներին որևէ ապօրինի կառույց չի ավելացել:</p>
2.4	<p>Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանում կենդանական ռեսուրսների հաշվառում, օգտագործման թույլատրելի չափաքանակների սահմանում, ձվադրավայր հանդիսացող հիմնական գետերում ձկան վերարտադրման պայմանների ուսումնասիրում, բնական ձվադրավայրերի</p>	<p>Կենդանական ռեսուրսների, այդ թվում՝ ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում և օգտագործման թույլատրելի չափաքանակների սահմանում, ձվադրավայր հանդիսացող հիմնական գետերում ձկան վերարտադրման պայմանների ուսումնասիրում, բնական ձվադրավայրերի առկա</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)</p> <p>ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան</p>	<p>2017թ. և շարունակական</p>	<p>ՀՀ պետական բյուջե՝</p> <p>«Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծառայություններ» ծրագրի շրջանակներում՝ 7,624.3 հազ դրամ և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի միջև 2017թ. մարտի 17-ին կնքվել է «Սևանա լճում և դրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման աշխատանքների» կատարման պետական գնման պայմանագիրը (NՀՀ-ԲԼ-ՊԸԱՇՁԲ-17/01):</p> <p>ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի կողմից մշակվել և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից հավանության է արժանացել «Սևանա լճում և դրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման աշխատանքներ» ծրագրի</p>

	<p>առկա վիճակի գնահատում, վերականգնման ուղիների մշակում</p>	<p>վիճակի գնահատում, վերականգնման ուղիների մշակում</p>					<p>շրջանակներում նախատեսվող գիտական որսի ժամանակացույցը: Իրականացվել է Սևանա լճի և ջրհավաք ավազանի էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայր հանդիսացող գետերի համալիր հիդրոէկոլոգիական հետազոտություններ, որոնք հիմք են ծառայել ձկան և խեցգետնի պաշարների գնահատման համար: Հետազոտություններն ընդգրկել են ապրիլ-դեկտեմբեր ժամանակահատվածը: Էնդեմիկ և արժեքավոր ձկնատեսակների, ինչպես նաև երկարաչանչ խեցգետնի կենսաբանական և պոպուլյացիոն ցուցանիշների ուսումնասիրության ընթացքում, մասսայական չափումներ կատարելիս, օգտագործել են նաև մասնավոր անձանց կողմից իրականացվող որսի արդյունքները: Պաշարների գնահատման նպատակով հետազոտվել են լճում ձկան և խեցգետնի արդյունահանման առանձնահատկությունները, որսամիջոցների համա պատասխանությունը պահանջվող նորմերին, որսունակության ցուցանիշները և այլն:</p>
--	---	--	--	--	--	--	--

						<p>Ձկների վերարտադրության պրոցեսի գնահատման և բնական վերարտադրության ընթացքը խոչընդոտող գործոնների բացահայտման նպատակով հետազոտություններ են իրականացվել Սևանի ավազանի հիմնական ձվադրավայր հանդիսացող 7՝ Ձկնագետ, Գավառագետ, Լիճք, Արգիչի, Վարդենիկ, Մակենիս, Մասրիկ գետերում: Անթրոպոգեն ազդեցության բացահայտման նպատակով հետազոտությունները ընդգրկել են ձվադրավայր հանդիսացող գետերի տարբեր հատվածներ՝ ակունք, միջին հոսանք, ստորին հոսանք: Կենսապայմանների գնահատման նպատակով իրականացվել են տրոֆիկ շղթայի հիմնական օղակների՝ հետազոտություններ:</p> <p>2017թ.-ի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ լայնածավալ հաշվետվությունը ներկայացվել է ՀՀ բնապահպանության նախարարություն (89 թերթ):</p> <p><u>Սևանա լճում ձկների ընդհանուր գանգվածի որոշում և օգտագործման</u></p>
--	--	--	--	--	--	---

						<p><u>Ենթակա պաշարի գնահատում'</u></p> <p>Ձկների ընդհանուր պաշարների գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ նախորդ տարվա համեմատ ձկնային ընդհանուր պաշարները աճել են 16.7 %-ով:</p> <p><b>2017թ.-ին ձկան ընդհանուր պաշարը կազմել է 2281տ:</b></p> <p>Անկառավարելի որսի հետևանքով ձկան արդյունաբերական պաշարների հարաբերական մասնաբաժնի աճը եղել է բավականին ցածր, ինչի արդյունքում ձվադրման ակտիվ փուլի մեկնարկից առաջ ձվադրող վտառը մնացել է հնարավոր մակարդակից ցածր և կազմել է մոտ 570տ: Ձկնային պաշարների միջին խտությունը 2017թ.-ին կազմել է 18 կգ/հա:</p> <p style="text-align: center;"><b><u>ՍԻԳ</u></b></p> <p>Առանձին ձկնատեսակների համապատասխան ուսումնասիրությունները ցույց են տվել, որ, ինչպես և նախորդ տարի, <b>2017թ.-ին նույնպես գերիշխող ձկնատեսակ է հանդիսացել սիգը, որի մասնաբաժինը նախորդ տարվա համեմատ աճել է և ներկայումս կազմում է ընդհանուր ձկնային պաշարների մոտ 97%-ը, ինչը</b></p>
--	--	--	--	--	--	--



						<p><b>համարժեք է 2216տ քաշին:</b>  <b>Արդյունագործական պաշարը կազմել է մոտ 554տ:</b> Չվերահսկվող ձկնորսության արդյունքում լճում այս ձկնատեսակի արդյունագործական պաշարների համարժեք վերականգնում տեղի չի ունեցել: 2017թ.-ի ձկնաբանական հետազոտությունները ցույց են տվել, որ շարունակվում է սիգի գիրացող և ձվադրող վտառների երիտասարդացման միտումը: Որսվող սիգի գիրացող և ձվադրող վտառներում տարեց-տարի նկատվում է զգալի երիտասարդացում, ինչը անկառավարելի ձկնորսության հետևանք է: Քանի որ որսաբաժնում գերակայել են ոչ սեռահասուն առանձնյակները, որոնք պետք է ձվադրեն հաջորդ տարի, հետևաբար նման ձևով իրականացվող անկառավարելի որսը չի նպաստում այս ձկնատեսակի արդյունագործական պաշարների ցանկալի աճին: Ուստի սիգի պաշարների վերականգնման համար, այս ձկնատեսակի վերարտադրության և մանրածկան պահպանության ապահովման, որսագողության բացառման դեպքում,</p>
--	--	--	--	--	--	---

						<p>2018թ. համար հնարավոր է իրականացնել սիզ ձկնատեսակի որս արդյունագործական պաշարի 25%-ի չափով՝ մոտ 138տ:</p> <p><b><u>ԻՇԽԱՆ</u></b></p> <p>Նախորդ տարվա համեմատ, նույն սեզոնին աճել է <b>իշխան ձկնատեսակի պաշարը՝ կազմելով 17.0 տոննա</b>, սակայն մեծ տարիքի առանձնյակների մասնաբաժինը եղել է ոչ բարձր: Այս ձկնատեսակը նույնպես գրանցվել է հիմնականում մինչև 16մ խորություններում: Բաշխման մոդելում առանձնանում են երկու հիմնական հատվածներ. առավել խոշոր կուտակում դիտվել է Կարճաղբյուր համայնքի և համանուն գետի ուղղությամբ, իսկ ավելի փոքր կուտակում արձանագրվել է Արտանիշ թերակղզու հյուսիսահայաց ափերի հատվածում: Իշխան ձկնատեսակի տարածական բաշխման մոդելը ցույց է տալիս, որ Սևանա լճում իշխանի կուտակումներում ձկնային պաշարների խտությունը մոտ է լճածածանի ցուցանիշին և դարձյալ զգալիորեն զիջում է սիգին: Սևանի իշխանի պահպանության նպատակով առաջարկվում է ուժեղացնել</p>
--	--	--	--	--	--	---

						<p>հսկողությունը լծում, իսկ ձվադրման շրջանում գետերում և գետաբերանների հատվածներում:</p> <p><b><u>ԱՐԾԱԹԱՓԱՅԼ ԼՃԱԾԱԾԱՆ</u></b></p> <p><b>Պաշարները 2017թ. գնահատվել են 46.7տ:</b> Հաշվի առնելով Սևանա լճի համար արծաթափայլ լճաձաձանի էկոլոգիական տեսակետից անցանկալի լինելը, առաջարկվում է առաջիկա տարում շարունակել նրա <b>անսահմանափակ որսը</b> լծում:</p> <p>Այլ ձկնատեսակների նշանակալի կամ արդյունագործական պաշարներ չեն գրանցվել: Կատարվել է սիգի գիրացող վտառի ուսումնասիրություն (գծային և քաշային աճ, չափատարիքային կազմ, սննդառություն), սիգի ձվադրող վտառի ուսումնասիրություն (բեղունության չափատարիքային կազմ), արծաթափայլ լճաձաձանի ձվադրավայրերի և ձվադրման ժամկետների ուսումնասիրություն,</p> <p>Արծաթափայլ լճաձաձանի գծային, քաշային աճի, բեղունության, բնական վերարտադրության ուսումնասիրություն, Իշխանի գիրացող վտառի ուսումնասիրություն (գծային և քաշային աճ, չափատարիքային կազմ,</p>
--	--	--	--	--	--	---

						<p>աննդառություն), Իշխանի ձվադրող վտառի (առանձնյակների) ուսումնասիրություն (բեղունություն, չափատարիքային կազմ, քանակ) Սևանա լճում Սևանի կողակի և հանդիպող այլ ձկնատեսակների ուսումնասիրություն, զանգվածի որոշում և վիճակի գնահատում:</p> <p style="text-align: center;"><b><u>ԿՈՂԱԿ</u></b></p> <p>Սևանա լճում ձկնորսական ցանցերով որսվող ձկների որսաբաժնում <b>Սևանի կողակ գրեթե չի հանդիպել:</b> Կողակի եզակի առանձնյակներ հանդիպել են գետերում: 2017թ. լճից որսվել է և հետազոտվել է կողակի 3 առանձնյակ: Հաշվի առնելով, որ Սևանի էնդեմիկ վտանգված ձկնատեսակների՝ կողակի և բեղլուի պոպուլյացիաների ծայրահեղ վատ վիճառ, անհրաժեշտ ենք համարում անհապաղ միջոցներ ձեռնարկել լճում այս արժեքավոր ձկնատեսակների պապանության և արհեստական վերարտադրության ուղղությամբ:</p> <p>Ներկայումս <b>Սևանա լճի ձկաշխարհը ներառում է 8 տեսակ ձկներ,</b> որոնք պատկանում են 3 ընտանիքի.</p>
--	--	--	--	--	--	---

						<p><b>Իշխան</b> - <i>Salmo ischchan</i> Kessler, 1877</p> <ul style="list-style-type: none"> <li>• Գեղարքունի - <i>Salmo ischchan gegarkuni</i> Kessler, 1877</li> <li>• Ամառային իշխան - <i>Salmo ischchan aestivalis</i> Fortunatov, 1927</li> </ul> <p><b>Սիգ</b> - <i>Coregonus lavaretus</i> Linnaeus, 1758</p> <p><b>Կողակ</b> - <i>Capoeta capoeta sevangi</i> De Filippi, 1865</p> <p><b>Բեղլու</b> - <i>Barbus goktschaicus</i> Kessler 1877</p> <p><b>Արծաթափայլ լճածածան</b> - <i>Carassius auratus gibelio</i> Bloch., 1783</p> <p><b>Թեփուկավոր ծածան</b> - <i>Cyprinus carpio</i> Linnaeus, 1758</p> <p><b>Տառեխիկ</b> - <i>Alburnoides bipunctatus armeniensis</i> Dadikyan, 1972</p> <p><b>Ամուրյան չեբաչոկ</b> - <i>Pseudorasbora parva</i> Temminck et Schlegel, 1846:</p> <p><b>Այս ձկնատեսակներից օտարածին են հնդիսանում սիգը, արծաթափայլ լճածածանը, թեփուկավոր ծածանը, տառեխիկը և ամուրյան չեբաչոկը:</b></p> <p>Սիգը համարվում է կլիմայավարժեցված տեսակ, իսկ արծաթափայլ լճածածանը, թեփուկավոր ծածանը, տառեխիկը և ամուրյան չեբաչոկը պատահական ներմուծված տեսակներ: Պատահական ներմուծված տեսակները լճում զբաղեցնում են էնդեմիկ</p>
--	--	--	--	--	--	---

						<p>ձկնատեսակների էկոլոգիական խորշերը և սնվում են ինչպես մանրաձկների, այնպես էլ հասուն առանձնյակների կերով՝ հանդիսանալով նրանց համար կերային մրցակիցներ: Ներմուծված ձկնատեսակները, բացի նրանից, որ հանդիսանում են կերային մրցակից էնդեմիկ ձկնատեսակների համար, այլև այդ ձկներով և նրանց մանրաձկներով Սևանա լճում սնվում է իշխանը: Այսպիսով, պատահական ներմուծված ձկնատեսակները էկոհամակարգի համար ունեն ինչպես դրական նշանակություն, այնպես էլ՝ բացասական:</p> <p>Սևան թափվող գրեթե բոլոր գետերում արդեն հանդիպում են <b>տառեխիկի առանձնյակներ</b>, որոնք գետերում արդեն իսկ հանդիսանալով դոմինանտ տեսակ զբաղեցնում են բեղլուի և կողակի գետային և գետալճային ձկների էկոլոգիական խորշերը:</p> <p><b><u>ԽԵՑԳԵՏԻՆ</u></b></p> <p>Արդյունագործական կենդանիների պաշարների գնահատման հիմքում ընկած են դրանց կենսաբանական և պոպուլյացիոն ցուցանիշները,</p>
--	--	--	--	--	--	--

						<p>մասնավորապես պոպուլյացիաների խտության, չափա-տարիքային և սեռական կառուցվածքի, բեղունության, թվաքանակի և կենսազանգվածի սեզոնային դինամիկայի, տարածական տեղաբաշխման և միգրացիայի առանձնահատկությունները, աճի տեմպերը, ինչպես նաև որսագործիքների որսունակության ցուցանիշները:</p> <p>Խեցգետնի պաշարները հաշվարկելիս օգտագործվել են որսագործիքների որսունակության և լճում կենդանու գոյության համար պիտանի՝ օգտակար մակերեսի ցուցանիշները, վերջինիս սահմանները որոշվել են Կիրեևի կողմից մշակված (1933) Սևանա լճի հատակի բաթիմետրիկ քարտեզի օգնությամբ:</p> <p>Պոպուլյացիայի թվաքանակի ինտենսիվ շահագործման պատկերը կարելի է ստանալ հաջորդաբար իրականացվող որսի օգնությամբ: Մեծ ջրային էկոհամակարգերում կիրառվում է ստանդարտ թակարդներով կազմակերպվող որսի մեթոդը: Մեթոդի կարևորագույն սկզբունքը պաշարների գնահատման ժամանակ նույնատիպ որսագործիքների կիրառությունն է:</p>
--	--	--	--	--	--	--

						<p>Պաշարների գնահատման այս մեթոդի էությունը հետևյալն է: Որոշակի մակերեսով ջրային տարածքում հնարավորինս հավասար հեռավորությունների վրա տեղադրվում են խեցգետնորսիչները: Որոշվում է որսագործիքի միջին որսունակությունը: Խեցգետինը բաշխվածությունը լճում օգտակար մակերեսի համար ընդունվում է հավասարաչափ: Այնուհետև հաշվարկվում է տվյալ մակերեսից որսված կենդանիների քանակը, վերահաշվարկվում է 1 հա-ի համար: Հիմք ընդունելով խեցգետնի տարածման սահմանները ըստ բաթիմետրիկ քարտեզի, ունենալով գրունտների բաշխվածությունը լճում՝ ըստ խորությունների և տարածքների, որոշվում է այն օգտակար մակերեսը, որտեղ կարող է գոյատևել կենդանին: 1հա-ի տվյալները բազմապատկվում են օգտակար մակերեսով, ստանալով արդյունագործական չափի կենդանիների թվաքանակը և զանգվածը: Երկարաչանչ խեցգետնի համար թույլատրվում է արդյունահանել արդյունագործական չափերի կենդանիների 25-40%-ը: Սևանա լճում</p>
--	--	--	--	--	--	--



						<p>խեցգետնի պաշարների գնահատման ժամանակ կիրառվել է այս մեթոդը: Հաշվի առնելով այն փաստը, որ արդյունահանման ընթացքում լճում խախտվում են որսի կենդանիների թույլատրելի չափերը, որսաչափի գնահատման ընթացքում ընդունվել է 25%-ի ցուցանիշը: Էկոհամակարգի խեցգետնային արդյունավետությունը գնահատվել է 1 հա-ի հաշվարկով, հիմք ընդունելով կենդանիների գոյության համար նպաստավոր էկոհամակարգում առկա օգտակար մակերեսը:</p> <p>Հաշվետու ժամանակահատվածում երկարաչանջ խեցգետնի կենսաբանական և պոպուլյացիոն ցուցանիշների հետազոտություններ են իրականացվել Մեծ Սևանի՝ Երանոս, Զիլ, Աստղածոր, Նորադուզ, Ծափաթաղ, Մարտունի, Կարճաղբյուրի տեղամասերում և Փոքր Սևանի՝ Թերակղզու, Դրախտիկի, Չկալովկայի, Շորժայի, Լճափի և Նորաշենի ջրային տարածքներում:</p> <p>Խեցգետնի վերարտադրման ցուցանիշները 2017թ. մարտի 18-ին՝ կատարված խեցգետնաբանական հետազոտությունները ցույց են տվել, որ</p>
--	--	--	--	--	--	--

						<p>վերարտադրման գործընթացը լճում նախորդ տարվա համեմատ, ջրի առավել ցածր ջերմաստիճանի պատճառով, մի փոքր դանդաղում է: Լճի համատարած սառցակալման հետևանքով ջրի ջերմաստիճանը մարտ ամսին 2016թ. համեմատ եղել է 2<sup>o</sup> C-ով ավելի ցածր: Բեղմնավորված ձվերով էգեր մարտին չեն գրանցվել: Էգերի և արունների հարաբերակցությունը որսաբաժնում մնացել է անփոփոխ՝ տատանվել է 1:1 սահմաններում: Բեղմնավորված ձվերով էգեր հայտնաբերվել են ապրիլի սկզբին՝ Դրախտիկ գյուղին հարակից ջրային տարածքում: Նախորդ երկու տարիների համեմատ 2017թ. գրանցվել է երկարաչանչ խեցգետնի բեղունության աճ: Ընդ որում աճի միտում է գրանցված գրեթե բոլոր տարիքային խմբերի մոտ, առկա է սերտ կապ կենդանիների մարմնի երկարության և բեղունության ցուցանիշների միջև:</p> <p>Սևանա լճում երկարաչանչ խեցգետնի տարածական տեղաբաշխման հետազոտությունները ցույց են տվել, որ այս հիդրոբիոտոնները հիմնականում կենտրոնացված են 5-15մ խորություններում: Ընդ որում</p>
--	--	--	--	--	--	---

						<p>համեմատաբար փոքր չափեր ունեցող խեցգետինների (1-3 տարեկան) մասնաբաժինը 5-10մ խորություններում տատանվում է 55.1-56.3 %-ի սահմաններում, իսկ 11մ խորությունից սկսած նրանց քանակը սկսում է աստիճանաբար կրճատվել: 4-6 տարեկան (9.9-13.3սմ) կենդանիների բաշխվածությունը նշված խորություններում նմանատիպ է: Առավել խոշոր առանձնյակներ լծում հանդիպում են սահմանափակ քանակով և հիմնականում նախընտրում են 11-15մ խորությունները: Խեցգետնի տարածման սահմանները Սևանա լճում հասնում է մինչև 30մ խորություններ: Համեմատաբար խոշոր առանձնյակներ են հանդիպում Մեծ Սևանի՝ Ջիլ, Երանոս, Նորադուզ տարածքներում: Մինչև մեկ տարեկան կենդանիներ են հանդիպում մակրոֆիտներով ծածկված ծանծաղուտներում, նշված վայրերը նրանց համար ծառայում են ոչ միայն որպես թաքստոց, այլև որպես սննդի աղբյուր: Սևանա լճի խեցգետնի պոպուլյացիայի մոդալ տարիքային խմբերը կազմել են 8.4-12 սմ երկարությամբ առանձնյակները,</p>
--	--	--	--	--	--	---

						<p>առավելագույն չափը հավասարվել է 13,8սմ:</p> <p>Դիտարկումները ցույց են տվել, որ Սևանա լճում շարունակվել է երկարաչանչ խեցգետնի արդյունահանման գործընթացը պասսիվ որսագործիքներով՝ չինական ծալովի և զսպանակաձև խեցգետնորսիչներով: Զսպանակավոր խեցգետնորսիչներով կատարված որսի արդյունքում ոչ արդյունագործական կենդանիների մասնաբաժինը կազմել է մոտ 22%, որսաբաժնում 1 կենդանու միջին զանգվածը՝ հավասարվել է 29.5գ: Չինական ծալովի խեցգետնորսիչներով կատարված որսի արդյունքում որսաբաժնի 46.7%-ը (միջին ցուցանիշ) կազմել են ոչ արդյունագործական չափի՝ մինչև 9սմ երկարությամբ կենդանիները, որսաբաժնում 1 կենդանու միջին զանգվածը՝ 23.7գ: Նման որսագործիքներով խեցգետնի արդյունահանման արդյունքում պոպուլյացիան զրկվում է համալրման և վերականգնման հնարավորությունից, որի հետևանքով աճել է արդյունագործական պաշարների խզման վտանգը: Զսպանակավոր</p>
--	--	--	--	--	--	--

						<p>խեցգետնորսիչներով վերջին տարիներին իրականացված որսի վերլուծությունը ցույց է տվել, որ լճում կտրուկ նվազել է խեցգետնի քանակը. Օրինակ, 2015թ. 1 զսպանակաձև խեցգետնորսիչի միջին որսունակությունը կազմել է 281գ, 2016թ. նույն ցուցանիշը հավասարվել է 333գ, իսկ 2017թ. այն կազմել է ընդամենը 154գ: <b>խեցգետնի արդյունագործական պաշարը Սևանա լճում 2017թ. կազմել է 2600տ:</b> Նշված ցուցանիշը նախորդ տարվա համեմատ խիստ ցածր է :</p> <p><b>Բազմամյա տվյալների վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ պաշարների նման անկումը, վատ կառավարվող որսի արդյունք է: 2017թ. Սևանա լիճը</b> խեցգետնարդյունավետության ցուցանիշներով դասվում է միջին արդյունավետության լճերի շարքում: Սևանա լճի խեցգետնի արդյունագործական պաշարների խզումը կանխելու նպատակով պետք է ձեռք առնել հրատապ միջոցառումներ:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Սևանա լճում արգելել խեցգետնի որսը չինական ծալովի և զսպանակաձև խեցգետնորսիչներով ու թարփերով, թույլատրելով որսը միայն կասպիական խեցգետնորսիչներով և ցանցերով:</li> </ul>
--	--	--	--	--	--	--

						<ul style="list-style-type: none"> <li>• Արգելել ոչ արդյունագործական չափի կենդանիների որսը, վաճառքը երկրի ներսում և արտահանումը երկրի սահմաններից դուրս:</li> <li>• Ակտիվ պայքար մղել որսի կարգը խախտողների դեմ: Խստացնել տույժերի և տուգանքների համակարգը:</li> <li>• Խեցգետնի որսի արգելք սահմանել նրա բազմացման ամենափնտենսիվ շրջանում՝ հունիս-օգոստոս ժամանակահատվածում:</li> </ul> <p><b>Հիմք ընդունելով Սևանա լճում խեցգետնի արդյունագործական պաշարների չափը՝ 2600տ, հաշվի առնելով համալրող սերնդի կրճատման փաստը, 2018թ. համար խեցգետնի թույլատրելի որսաչափ սահմանել 500տ:</b></p> <p>Խոշոր ջրային էկոհամակարգերի համար խեցգետնի ընդհանուր զանգվածի գնահատական չի տրվում, քանի որ հետազոտությունների արդյունքները հիմնվում են արդյունահանման տվյալների վրա, որոնք առնչվում են պոպուլյացիայի միայն արդյունագործական մասին: Ընդհանուր զանգվածի գնահատման համար կարևոր է իմանալ տարբեր տարիքային խմբերի բնական մահացությունը, ինչը խոշոր</p>
--	--	--	--	--	--	--

						<p>ջրամբարներում գործնականորեն անհնարին է որոշել: Խեցգետինների բնական մահացության ուղղակի հաշվարկներ չկան կատարված, ավելին, մի ջրամբարում ստացված ցուցանիշները չի կարելի տարածել այլ ջրամբարների վրա՝ կենսապայմանների բազմազանության պատճառով: Մոտավոր պատկերացում կենդանիների նախնական թվաքանակի մասին տալիս է պոպուլյացիայի սեռական կառուցվածքը՝ էգերի և արուների հարաբերակցությունը, սեռահասուն էգերի թվաքանակը, նրանց բեղունության ցունիշները, բեղմնավորված ձվերի մահացության աստիճանը և կենդանիների աճի արագությունը:</p> <p><b><u>Ամփոփ եզրակացություն</u></b></p> <p><b>2017թ.-ին ձկան ընդհանուր պաշարը կազմել է 2281տ:</b></p> <p><b>Ձկնային ընդհանուր պաշարները աճել են 16.7 %-ով:</b></p> <p><b><u>Սիգ ձկնատեսակի</u> արդյունագործկան պաշարների վերլուծության արդյունքում պարզվել է, ներկայումս այն կազմում է ընդհանուր ձկնային պաշարների մոտ 97%-ը, ինչը</b></p>
--	--	--	--	--	--	---

							<p>համարժեք է 2216տ քաշին: <b>ՍԻԳԻ արդյունագործական պաշարը կազմել է մոտ 554տ: 2018թ. համար հնարավոր է իրականացնել սիգ ձկնատեսակի որս արդյունագործական պաշարի 25%-ի չափով՝ մոտ 138տ:</b></p> <p><b>Արծաթափայլ լճածածանի պաշարները կազմել են 46,7տ:</b></p> <p><b>Սևանի իշխանի պաշարը</b> կազմել է՝ <b>17,0տ:</b></p> <p>Այլ ձկնատեսակների /կողակ, բեղլու, տառեխիկ, չեբաչոկ/ նշանակալի պաշարներ չեն գրանցվել:</p> <p><b>Խեցգետնի արդյունագործական պաշարները կազմել է 2600տ:</b> Նշված ցուցանիշը նախորդ տարավա համեմատ խիստ ցածր է: <b>2018թ. համար խեցգետնի թույլատրելի որսաչափ է սահմանել 500տ:</b></p> <p>(Ծավալուն հաշվետվությունը (89 թերթ) ներկայացվել է ՀՀ բնապահպանության նախարարություն)</p>
2.5	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազա նի տարածքում մարզերի և	Արդյունաբերու թյան, գյուղատնտեսության, տրանս	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,	ՀՀ տարածքային կառավարման և	2017թ. և շարունակական	ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին	<p><u>ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն</u></p> <p>«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից իրականացվել են Ճամբարակ-Ծովագյուղ միջին ճնշման գազատարի</p>



	<p>համայնքների՝ ըստ ոլորտների սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամ կետ ծրագրերի մշակում</p>	<p>պորտի, էներգետիկայի, կապի, տուրիզմի, քաղաքաշինության և բնապահպանության ոլորտների զարգացման միջոցառումների մշակում</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն</p>	<p>զարգացման նախարարություն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան ՀՀ Վայոց ձորի մարզպետարան</p>			<p>վերատեղադրման աշխատանքները՝ 71.238 մլն դրամ արժեքով: Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի շրջանակներում «ԲԷՏ» ՓԲԸ-ի կողմից իրականացվել է Վարդենիս 220 կՎ լարման ՕԳ-ի կառուցման աշխատանքները՝ շուրջ 1650.0 մլն դրամ արժեքով: <u>ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը</u> հայտնում է, որ Սևանա լճի ջրիավաք ավազանի համայնքները ունեն սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրեր, ինչպես նաև ՀՀ կառավարության 06.06.2017թ. N 29 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել մարզի սոցիալ-տնտեսական զարգացման 2017-2025թթ. ռազմավարական ուղղությունները:</p>
2.6	<p>Ձկան պաշարների համալրում</p>	<p>Էնդեմիկ և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության ապահովում</p>	<p>«Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ Գեղար</p>	<p>2017թ. և շարունակական</p>	<p>Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի</p>	<p><u>Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամ</u> իրականացվել է՝ • Սևանի իշխանի ձկնկիթի ինկուբացում բնական պայմաններում՝</p>

			ն զարգացման» հիմնադրամ (համաձայն նույնանուն նույնանուն)	քունիքի մարզպետա րան  ՀՀ գիտու թյունների ազգային ակադեմիա (համաձայ նույնանուն)		շրջանակներում	<p>Լիճք գետի ակունքում,</p> <ul style="list-style-type: none"> <li>• Սևանի իշխանի մանրածկան և մեծ չափերի ձկան չնախատեսված բացթողում Սևանա լիճ,</li> <li>• Մշտադիտարկում:</li> </ul> <p><b>Ձկնկիրթի ինկուբացում բնական պայմաններում՝ Լիճք գետի ակունքում</b></p> <p>Պաշարների վերականգնման տեսանկյունից առավել արդյունավետ մեթոդ ընտրելու նպատակով 2017 թվականի ընթացքում Հիմնադրամը Լիճք գետի ակունքում իրականացրել է մոտ 3600 հատ «աչքի» փուլում գտնվող Սևանի իշխանի ձկնկիրթի փորձնական ինկուբացում:</p> <p><b>Մանրածկան և մեծ չափերի ձկան չնախատեսված բացթողում Սևանա լիճ</b></p> <p>2017թ-ի մայիս-հունիս և սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Հիմնադրամը նախատեսում էր բաց թողնել Սևանի իշխանի ամառային և գեղարքունի ենթատեսակների մոտ մեկ միլիոն մանրածուկ (մոտ 1 գ միջին զանգվածով), սակայն Սևանա լճի սառելու հետևանքով վնասվեց լճում՝ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր համայնքին հարակից հատվածում տեղակայված Հիմնադրամի կողմից ստեղծված՝ «ՍԵՎԱՆ ԱԿՎԱ» ՍՊ</p>
--	--	--	---	---	--	---------------	--

						<p>Ընկերությանը պատկանող ցանցավանդակային տնտեսությունը, որի արդյունքում տեղի ունեցավ ցանցավանդակներում առկա ավելի քան 110 (մեկ հարյուր տաս) տոննա ընդհանուր զանգվածով Սևանի իշխանի գեղարքունի և ամառային ենթատեսակների տարբեր չափերի ձկների զանգվածային փախուստ:</p> <p>Վնասված ցանցավանդակներում 31.01.2017-ի դրությամբ եղել է մոտ 116 (մեկ հարյուր տասնվեց) տոննա ձկնապաշար, որոնց մոտ 3%-ը ոչնչացել է ցանցավանդակների դեֆորմացիայի արդյունքում, իսկ 97%-ը՝ մոտ 112 (մեկ հարյուր տասներկու) տոննա փախել է Սևանա լիճ:</p> <p>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փախուստ կատարած իշխանի/մանրաձկների պաշարը Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման տեսանկյունից 2017 թվականի համար բավարար է և կարող է ապահովել մայրական վտառների ձևավորման համար տարեկան բացթողումների անհրաժեշտ ծավալները, Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը որոշել է 2017 թվականի</p>
--	--	--	--	--	--	--

						<p>ընթացքում մանրաձկան նոր պաշարների բացթողում չիրականացնել:</p> <p><u>Մշտադիտարկում</u></p> <p>Հիմնադրամի կողմից Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման աշխատանքների շրջանակներում իրականացվող մշտադիտարկումները նպատակ են ունեցել բացահայտելու 2015-2017 թթ. ընթացքում Սևանի իշխանի բնական պաշարների վերականգնման նպատակով Հիմնադրամի կողմից բացթողնված ձկների, բնական պայմաններում ձկնկիթի ինկուբացիայի կենսաբանական ընթացքը, ինչպես նաև գնահատելու նշված գործընթացների արդյունավետությունը և բացահայտելու իշխանի բնական վերարտադրությանը խոչնդոտող գործոնները:</p> <p>Վերը նշված աշխատանքներն իրականացվել են հիմնադրամի և գործընկեր կազմակերպությունների մասնագետների կողմից:</p> <p>Մոնիթորինգի արդյունքների համաձայն Սևանա լճում առկա են բոլոր պայմանները Սևանի իշխանի ենթատեսակների նորմալ աճի և զարգացման համար:</p>
--	--	--	--	--	--	---

						<p>Լճում առկա սնունդը բավարար է տարեկան մոտ 2000 տոննա վայրի իշխանի արդյունագործական պաշարների համար (տես՝ ՀՀ ԳԱԱ հաշվետվություն 2017թ):</p> <p>Ձվադրավայր հանդիսացող գետերում նույնպես առկա են բարենպաստ կենսապայմաններ Սևանի իշխանի մանրաձկների գետային փուլի համար, սակայն գետերում իրականացվող անկառավարելի ջրառը, որսագողությունը և գետերի աղտոտումը կենցաղային աղբով մեծ խնդիր են առաջացնում իշխանի բնական պաշարների վերականգնման գործում:</p> <p>Սևանի իշխանի բաց թողնված առանձնյակները, որոնց մի մասն արդեն սեռահասուն վիճակով ձվադրելու նպատակով պետք է մտնի գետեր, որսվում են լճում և գետերում: Այդ իսկ պատճառով, ներկայումս, գետերում բազմացող իշխանի առանձնյակներ չեն գրանցվում:</p> <p>Վերը նշված խնդրի առկայությունը դեռևս թույլ չի տալիս մեզ ունենալ ձևավորված վայրի իշխանի մայրական կազմ:</p> <p>Սույն թվականի հոկտեմբեր ամսից</p>
--	--	--	--	--	--	--

						<p>սկսած մեր կողմից իրականացվել են գիտարշավներ Սևան թափվող գետերում իշխանի ծնողական կազմի գնահատման նպատակով: Գետերում սեռահասուն իշխաններ հանդիպել են եզակի առանձնյակներով, այն ինչ բավականին շատ քանակներով ապօրինի որսված իշխանի առանձնյակներ վաճառվում են մայրուղու երկայնքով առկա ձկան վաճառքի կետերում:</p> <p>Պարզելու համար արդյո՞ք վաճառվող իշխանները վայրի են, թե արհեստական աճեցված՝ մեր կողմից ձեռք են բերվել վաճառքի կետերից իշխանի առանձնյակներ, որոնք ենթարկվել են լաբորատոր հետազոտությունների: Լաբորատոր պայմաններում ուսումնասիրվել է Սևանի իշխանի գեղարքունի ենթատեսակի 12 առանձնյակ, որոնց երկարությունը կազմել է 27–32 սմ: Հետազոտված բոլոր առանձնյակները եղել են 2+ տարեկան և ոչ սեռահասուն: Ուսումնասիրվել է նաև այդ ձկների սննդառությունը: Սննդառության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ իշխանի բոլոր առանձնյակների ստամոքսում առկա է եղել բնական կեր, մասնավորապես,</p>
--	--	--	--	--	--	--

						<p>հատակային անողնաշարավոր կենդանիներից՝ կողալողեր և մանր խխունջներ: Կատարված լաբորատոր հետազոտությունների արդյունքները փաստում են, որ իշխանները եղել են վայրի և որսվել են Սևանա լճից:</p> <p>Կատարված մշտադիտարկումների արդյունքում պարզվել է, որ բաց թողնված մանրաձկների մեծ մասը ոչնչանում է համայնքների բնակիչների կողմից: Դա են փաստում մշտադիտարկումների ժամանակ արձանագրված որսագողության դեպքերը, գետերից ոռոգման շրջանում չկարգավորվող ջրառը, ինչի հետևանքով գետերում ստեղծվում են անբարենպաստ կենսապայմաններ իշխանի մանրաձկների համար:</p> <p>Ամփոփելով կարելի է նկատել, որ 2015-2017 թթ ընթացքում Հիմնադրամի գործունեության ընթացքում Սևանա լճի էկոհամակարգ է ներմուծվել շուրջ 2.286.000 հատ տարբեր չափի իշխան, որից ավելի քան 100,000 առանձյակ՝ 2017թ-ին և ավելի քան 1 մլն առանձնյակ՝ 2018-2019թ-ին բնական կորուստների պայմաններում կլինեին ձվադրող մայրական կազմի տարիքի:</p>
--	--	--	--	--	--	--

							<p>Սակայն վերոնշյալ խոչընդոտների պատճառով 2017թ-ին գրանցվել են ձվադրման նպատակով միգրացվող շատ փոքր թվով առանձնյակներ: Ներկա բարձիթողի վիճակի պատճառով արդեն իսկ ոչնչացվել է 2018-2019 թթ. պոտենցյալ մայրական կազմի զգալի մասը գետերում և լճում և եթե չձեռնարկվեն կոնկրետ միջոցներ՝ ձվադրավայրերի խնդիրների լուծման և ձկնագողության կասեցման ուղղությամբ, ապա 2018 թ-ին և հետագա տարիներին նույնպես բնական ձվադրող մայրական վտառ չի ձևավորվի:</p> <p>Հիմնադրամը հավաքագրված խնդիրները լուծելու համար իրականացնում է լուծումների մշակում, ինչը թույլ կտա առավել արդյունավետ իրականացնել Սևանի իշխանի բնական պոպուլյացիայի վերականգնումը: Որոշ ինդիկատորների լուծմանը Հիմնադրամը կանրադառնա 2018 թվականի ընթացքում՝ պիլոտային աշխատանքների իրականացմամբ:</p>
2.7	«Սևան» ազգային պարկի պահպանու թյուն, պարկում	Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու	ՀՀ բնապահպանության նախարարու	ՀՀ գիտության ազգային ակադեմիա	2017թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե՝ «Սևան» ազգային	<p><u>ՀՀ բնապահպանության նախարարություն՝</u>  <b>Գիտական ուսումնասիրություններ</b>          2017թ. իրականացվել է Սևանա լճում</p>



	<p>գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ</p>	<p>կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանության, վերարտադրություն, գիտական ուսումնասիրություններ և շրջակա միջավայրի դիտանցի իրականացում</p>	<p>թյուն</p>	<p>(համաձայնությամբ)</p>		<p>պարկի պահպանություն, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ ծրագիր՝ 249,355,6 հազ.դրամ</p>	<p><b>սիգի</b> պոպուլյացիոն ու կենսաբանական ցուցանիշների, նրանց տարածական տեղաբաշխման կենսապայմանների հետազոտություններ:</p> <p>Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Սևանա լճի ափամերձ գոտու ամբողջ երկայնքով՝ 2016թ. դեկտեմբերի 25-ից հետո և 2017թ. հունվար ամսին ձվադրած VI-II և VI-II-III սեռահասունության փուլերում գտնվող վերարտադրող սիգ տեսակի ձկների ձևավորված խումբը գտնվել են հիմնականում ափամերձ գոտում՝ լիթորալում (10-15 մ. խորություններում): Հունվար ամսին, ջրային այդ հատվածներից հանված դնովի ցանցերի մեջ եղած ձկների երկարությունը տատանվել են՝ 35,0-49,0 սմ., կշիռը՝ 542,0 – 1211,0 գրամ (փոքր Սևան, Թերակղզի, մեծ Սևան, Մարտունի): Ափամերձ գոտու ձկան խմբավորումը կազմված է եղել նաև ոչ սեռահասուն առանձնյակներից (մինչև 1 տարեկան և մեկ տարեկան ձկներից, որոնց երկարությունը տատանվել են 22.0-27,0սմ. կշիռը՝ 210.0-247.0 գրամի սահմաններում (փետրվար, փոքր Սևան, Ծովազարդ, Նորատուս ): Սիգ տեսակի</p>
--	--	---	--------------	--------------------------	--	---	--

						<p>             ձկների աղիների հագեցվածության բարձր աստիճանը վկայում է ուսումնասիրվող ջրային տարածքներում կերային բազայի առատության մասին: Փոքր Սևանում գարնանը սիգի հիմնական զանգվածը տեղաբաշխվել է 20-40 մետր խորություններում: Նմանատիպ փոփոխություններ են նկատվել նաև մեծ Սևանում: Սիգի հիմնական մասը տեղաբաշխվել է լճի 20 մետր մինչև հատակ ընկած տարածքում: Ձկների մի փոքր մասը հանդիպել է նաև մակերևույթին: Ըստ հասակային խմբերի սիգի միջին կշռի համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ ձկների բոլոր տարիքային խմբերի կշռի արժեքները համեմատաբար մեծ տատանումների չեն ենթարկվել: Գարնանային ուսումնասիրված տվյալների ընդհանուր վերլուծությունը ցույց է տվել, որ սիգ ձկնատեսակի պոպուլյացիայի կենսազանգվածը հիմնականում ապահովել են գիրացող վտառում՝ 27-28 սմ երկարությամբ ձկները, ինչը վկայում է այն մասին, որ մյուս տարիների համեմատ առկա է այս ձկնատեսակի ընդհանուր կենսազանգվածի որոշակի աճ:           </p>
--	--	--	--	--	--	--

						<p>Ուսումնասիրված տեսակի ձկների մոտ բացահայտվել է խառը սնուցում, ձկները սնվել են զոոբենթոսով և զոոպլանկտոնով:</p> <p>Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հոկտեմբեր ամսին ջերմաստիճանի նվազմանը զուգահեռ, սիզի նախաձվադրող վտառը աստիճանաբար պետք է տեղաշարժվի լճի ափամերձ գոտի: Սիզի պոպուլյացիայի հիմնական մասը կենտրոնացվել է Մեծ Սևանի կենտրոնական հատվածում, ափից՝ 3000-3500 մետր հեռավորության վրա, 15-20 մ և հատակամերձ շերտում 25-30 մ խորության պայմաններում: Ջրային այդ հատվածներից հանված դնովի ցանցերի մեջ եղած ձկների միջին երկարությունը՝ 29,0 սմ է, քաշը՝ 441,6 գրամ: Փոքր Սևանի պելագիալում ձկների կուտակման միջին խտությունը համեմատած Մեծ Սևանի հետ խիստ ցածր է: Փոքր Սևանի պելագիալում ձուկը տեղաբաշխված է հիմնականում 20-25 մ. խորություններում, ինչը վկայում է լճի այդ հատվածում նախաձվադրող սիզի ոչ մեծ կուտակումների առկայության մասին: Ուսումնասիրվող</p>
--	--	--	--	--	--	---

						<p>Ժամանակահատվածում սիգի միջին բեղունությունը կազմել է՝ 13000 – 29000 հատ ձկնկիթ: Նոյեմբեր – դեկտեմբեր ամիսներին սիգի նախաձվադրային կուտակումները դարձել են ավելի արտահայտված և ներկայացված են 2-4 տարեկան ձկներով, որոնք գտնվում են հասունության չորրորդ փուլում: 1+ տարեկան ձկները նախաձվադրող վտառում բացակայում են, ձկների մեծ մասը տվյալ տարում պատրաստ են վերարտադրման: Ըստ նախնական գնահատման սիգի զանգվածային ձվադրումը կսկսվի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակի վերջում:</p> <p><b>Այսպիսով ստացած տվյալների ընդհանուր վերլուծությունը ցույց է տվել, որ սիգ ձկնատեսակի պոպուլյացիայի կենսազանգվածը հիմնականում ապահովել են գիրացող վտառում՝ 27-28սմ. երկարությամբ ձկները: Ընդհանուր կենսազանգվածը նախորդ տարիների համեմատ աճել է , ինչը պայմանավորված է հիմնականում նախորդ 2-3 տարիների բեղուն սերունդների առկայությամբ, որը պատշաճ պահպանության և լճում</b></p>
--	--	--	--	--	--	---

						<p><b>բնական վերարտադրության պայմաններում կտա դրական արդյունք:</b></p> <p>2017թ. Սևանա լճում ձկան և խեցգետնի արդյունագործական որսի ժամանակ ուսումնասիրվել է <b>կարասի</b> կենսաբանական վիճակը: Ուսումնասիրվել է պոպուլյացիայի չափատարիքային, բաշխվածության, բազմացման ժամանակահատվածը: Սևանա լճում աճում է կարասի մեկ պոպուլյացիա, որը առաջացնում է բազմաթիվ սնվող և բազմացող վտառներ: Ինչպես նախորդ տարիներին, կարասը մասսայաբար հանդիպում է Սևանա լճի ամբողջ ափամերձ շրջանում: Ձվադրում է Ձկնագետ, Ծակքար, Լիճք, Արգիճի և Մասրիկ գետերում: Լճի մակարդակի բարձրացումը կարասի սնման և պոպուլյացիայի բնական վերարտադրության համար ստեղծել է բարենպաստ պայմաններ: Ուսումնասիրվող ժամանակահատվածում Արտանիշի ջրային տարածքից որսված կարասի միջին քաշը կազմել է՝ 347,6 գրամ, երկարությունը՝ 21,5 սմ: Որսը իրականացվել է 5-10 մետր</p>
--	--	--	--	--	--	---

						<p>խորությունների վրա 45 x 45 մմ. դնովի ցանցերով: Ջրի ջերմաստիճանը տատանվել է՝ 5-10° ց սահմաններում: Փոքր Սևանում՝ Ծովագարդ գյուղի ջրային տարածքում ուսումնասիրվող կարասի 80% -ը կազմել է 2+ և 20%՝ 3+ տարեկան ձկները: Էգերի քանակությունը՝ 86,3% է, արուններինը՝ 13,7%: Ուսումնասիրության ժամանակաշրջանում կարասի միևնույն տարիքի ձկների մոտ բավաժության գործակիցը ըստ Ֆալտունի և Կլարկի մնում է գործնականորեն անփոփոխ, ինչը վկայում է լճում համեմատաբար կայուն կերային բազայի առկայության մասին: Փոքր Սևանում կարասի բաշխվածության ամառային ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Լճաշենի լճախորշում այդ ձկնատեսակը հանդիպել է՝ 4-6 մետր խորությունների վրա, Հայրավանքի ջրային տարածքում՝ 7-8 մ. խորությունների վրա: Կարասը որսաբաժնում ներկայացված է եղել միայն 2+ և 3+ տարիքային խմբերով, որոնց բաժնեմասը կազմել է 30% և 70% համապատասխանաբար: Կարասի պոպուլյացիայի չափատարիքային</p>
--	--	--	--	--	--	--

						<p>կազմի վերլուծությունը ցույց է տվել, որ նախորդ տարիների համեմատ, կարասի միջին գծային չափերը փոքրացել են: Փոքրացել են նաև միջին կշիռը և առավելագույն չափերը, ինչը արդյունահանման ինտենսիվացման պատճառ է, այնպես էլ աղիքային մակաբույծներով ձկան վարակվածության աստիճանի մեծացման, որը բերել է բազմաթիվ առանձնյակների մահացության:</p> <p>2017թ. իրականացվել են Սևանա լճի <b>խեցգետնային</b> համակեցության էկոլոգիական հետազոտություններ:</p> <p>Նշված ժամանակահատվածում խեցգետնաորսիչներով փորձանմուշներ են ձեռք բերվել Սևանա լճի 18 տեղամասերից: Տեղամասերը ընտրվել են հաշվի առնելով լճում խեցգետնի առավել ինտենսիվ արդյունահանման հատվածները և միաժամանակ ուսումնասիրել հետազոտման առավել մեծ տարածք: Ուսումնասիրվել են խեցգետնի վերարտադրման առանձնահատկությունները, պոպուլյացիայի չափատարիքային և սեռական կառուցվածքները, բազմացման ժամանակահատվածը,</p>
--	--	--	--	--	--	---

						<p>հիդրոբիոտոնների բեղունության ցուցանիշները: Բացահայտվել են լճում խեցգետնի տարածական տեղաբաշխման առանձնահատկությունները: Հետազոտվել են 5100 առանձնյակ: Իրավիճակի գնահատման համար կատարվել է համեմատություն տեղամասերի որսի արդյունքների և տարվա կտրվածքով եռամսյակային ցուցանիշների միջև: Վերարտադրման ցուցանիշների գնահատման համար հետազոտվել է 200 հատ էգ խեցգետին: Խեցգետնի չափատարիքային կառուցվածքի հիման վրա գնահատվել է Սևանա լճի ուսումնասիրվող տարածքներում պոպուլյացիայի վրա անթրոպոգեն ծանրաբեռնվածության աստիճանը:</p> <p><b>Հետազոտության արդյունքները.</b></p> <p>Խեցգետնի վերարտադրման ընթացքի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Սևանա լճում խեցգետնի ձվադրման գործընթացը սկսվել է մարտ ամսին, երբ ջրի ջերմաստիճանը լճի մակերևույթին տատանվել է 2,0-2,5<sup>0</sup> c աստիճանի սահմաններում: Էգերի և արուների հարաբերակցությունը տատանվել է 1:1</p>
--	--	--	--	--	--	--



						<p>սահմաններում: Խեցգետնաբանական հետազոտու թյունների արդյունքում գրանցված պոպուլյացիայի բեղունության միջին ցուցանիշը նախորդ տարվա համեմատ փոխվել է աննշան չափով: Բեղմնավորված ձվի միջին կշիռը եղել է 11,5 մգ.: Էգերի չափերը տատանվել է 90-ից-13,9սմ.սահմաններում:</p> <p>Վերարտադրման գործընթացին մասնակցել են 3-ից 6 տարեկան առանձնյակները, որոնց գծային չափերը տատանվել են 8,8 – 13,9 սմ. սահմաններում, միջին բեղունությունը կազմել է 225 ձու/ առանձնյակ, սակայն բոլոր տարիքային խմբերի մոտ նախորդ տարվա համեմատ դիտվել է բեղունության կրճատման միտում: Բեղունության ցուցանիշների համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ առկա է վերարտադրման ցուցանիշների նվազման միտում: Վերջինս կարող է անթրոպոգեն ծանրաբեռնվածության արդյունքում պոպուլյացիայի երիտասարդացման հետևանք լինել: Խեցգետնի արդյունագործական պաշարների պահպանման և պոպուլյացիայի վերականգնման նպատակով՝ խեցգետնի</p>
--	--	--	--	--	--	---

						<p>             ձվադրման ժամանակահատվածում ՀՀ Բնապահպանության նախարարի 12.05.2017թ. թիվ 131-Ա հրամանի 2017թ. մայիսի 15-ից մինչև հուլիսի 31-ը Սևանա լճում դադարեցվել է խեցգետնի արդյունագործական որսը: Ուսումնասիրվող ժամանակահատվածում Սևանա լճում խեցգետնի ձևաչափական ցուցանիշների հետազոտությունները ցույց են տվել, որ որսաբաժնում խեցգետինների միջին երկարությունը փոքր Սևանում համապատասխանաբար եղել են՝ 9,0 - 10,5 սմ., կշիռը՝ 17,6 գ.– 31,0 գրամ: Մեծ Սևանում՝ 9,1 սմ.– 10,9 սմ., կշիռը՝ 20,1 գ.– 32,3 գրամ: Խեցգետնի պոպուլյացիայի սեռական կառուցվածքը լճի խորության մեծացմանը զուգընթաց փոփոխությունների է ենթարկվել: Էգերի մեծ կուտակումներ է առաջացել լճի ափամերձ գոտում՝ մինչև 7 մետր: Նրանց թվաքանակը նվազում է 15 մետրից սկսած, իսկ արունների մոտ թվաքանակը սկսում է կրճատվել աստիճանաբար: Կենդանիների թվաքանակը կրճատվում է 25 մետրից սկսած: 25 մ ավելի խորություններում խեցգետնի քանակության կտրուկ           </p>
--	--	--	--	--	--	---

						<p>կրճատվելը հավանաբար կապված է գրունտի փոփոխության հետ: Մեծ խորություններում գերակշռում է փափուկ տիղմը, որը խեցգետնի համար նախընտրելի բիոտոպ չի հանդիսանում: Լճի ուսումնասիրվող հատվածներում, խեցգետնի թակարդներով իրականացված որսի արդյունքում բացահայտվել է, որ խեցգետնի արդյունագործական պոպուլյացիայի մոդալ տարիքային խմբերը ուսումնասիրվող տեղամասերում կազմել են 3-5 տարեկան կենդանիները:</p> <p>Սևանա լճում խեցգետնի արդյունահանումն իրականացնում է զսպանակավոր և չինական խեցգետնաորսիչներով: Փոքր Սևանում ոչ արդյունագործական չափերի կենդանիների քանակը զսպանակաձև խեցգետնաորսիչներում Մեծ Սևանի համեմատ քիչ է: Վերջինս հավանաբար կարելի է բացատրել Մեծ Սևանում լիթորալի գերակշռությամբ, որտեղ հիմնականում կուտակումներ են առաջացնում համեմատաբար երիտասարդ խեցգետնիները:</p> <p>Արու և էգ խեցգետնիների աճի տեմպերը գրեթե միանման են: Աննշան</p>
--	--	--	--	--	--	---

						<p>տարբերություն է դրսևորվում կենդանիների առավել հասուն տարիքում՝ էգերը աճում են ավելի համաչափ, արունները՝ մի փոքր ավելի կտրուկ:</p> <p>Որսամիջոցների որսունակության հետազոտությունները ցույց են տվել, որ որսագործիքների միջև եղած հեռավորության մեծացմանը զուգընթաց, որսունակության ցուցանիշը մեծանում է:</p> <p><b>Վերը նշված ուսումնասիրության արդյունքներից ելնելով Սևանա լճում խեցգետնի աճի և զարգացման պայմանները բարենպաստ են: Վերարտադրման և որսաչափերի ցուցանիշների համաձայն պոպուլյացիան գտնվում է լավ վիճակում: Սակայն չափատարիքային շարքերի կրճատումը վկայում է անթրոպոգեն ծանրաբեռնվածության մասին:</b></p> <p>Հետազոտությունների արդյունքներից ելնելով գնահատվել է Սևանա լճի և գետերի ջրերի էկոլոգասանիտարական որակը:</p> <p>Ըստ մանրէաբանական ցուցանիշներից ստացված արդյունքների լճի և գետերի տարբեր հատվածների ջրերը,</p>
--	--	--	--	--	--	---

						<p>համաձայն Ռոմանենկոյի մակերևութային ջրի որակի էկոլոգասանիտարական գնահատման, դասվում են.</p> <p><b>Մեծ Սևան</b></p> <p><u>պելագիալ</u>՝ ըստ սապրոֆիտ մանրէների քանակի՝ շատ մաքուրից միանգամայն մաքուր կարգի, ըստ կոլի ինդեքսի՝ չափազանց մաքուր կարգի</p> <p><u>լիպոորալ</u>՝ ըստ սապրոֆիտ մանրէների քանակի՝ շատ մաքուրից թույլ աղտոտված կարգի, ըստ կոլի-ինդեքսի՝ շատ մաքուրից միանգամայն մաքուր կարգի:</p> <p><b>Փոքր Սևան</b></p> <p>- <u>պելագիալ</u>՝ ըստ սապրոֆիտ մանրէների քանակի՝ շատ մաքուրից բավական մաքուր կարգի, ըստ կոլի ինդեքսի՝ չափազանց մաքուր կարգի</p> <p>- <u>լիպոորալ</u>՝ շատ մաքուրից միանգամայն մաքուր կարգի:</p> <p><b>Գետ Դրախտիկ</b></p> <p>- <u>ակունք</u>՝ ըստ կոլի-ինդեքսի՝ շատ մաքուր կարգի, ըստ սապրոֆիտ մանրէների՝ չափավոր աղտոտված կարգի</p> <p>- <u>Դրախտիկ գյուղից մոտ 100մ ներքև</u>՝ չափավոր աղտոտվածից խիստ աղտոտված կարգի</p> <p>- <u>գետաբերան</u>՝ ըստ կոլի-ինդեքսի՝ չափավոր աղտոտված կարգի, ըստ</p>
--	--	--	--	--	--	--

						<p>սապրոֆիտ մանրէների՝ խիստ աղտոտված կարգի:</p> <p><b>Գետ Ձկնագետ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- <u>ակունք՝</u> շատ մաքուրից բավական մաքուր կարգի</li> <li>- <u>մինչ Ծովագյուղի տարածք մտնելը՝</u> բավական մաքուր կարգի</li> <li>- <u>գետաբերան՝</u> թույլ աղտոտվածից չափավոր աղտոտված կարգի:</li> </ul> <p><b>Գետ Մարտունի</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- <u>ակունք՝</u> միանգամայն մաքուր կարգի</li> <li>- <u>մարրման կայանի արտահոսքերի մուտքից մոտ 100մ վերև՝</u> բավական մաքուր կարգի</li> <li>- <u>կեղտաջրերի մեխանիկական մարրման կայանի արտահոսքերի թափման հատված՝</u> խիստ աղտոտվածից չափազանց կեղտոտված կարգի</li> <li>- <u>գետաբերան՝</u> խիստ աղտոտվածից չափազանց կեղտոտված կարգի:</li> </ul> <p><b>Գետ Ծակքար</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- <u>ակունք՝</u> միանգամայն մաքուրից բավական մաքուր կարգի</li> <li>- <u>գետաբերան՝</u> թույլ աղտոտված կարգի:</li> </ul> <p><b>Գետ Գավառագետ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- <u>ակունք՝</u> թույլ աղտոտված կարգի</li> <li>- <u>Նորափոս գյուղից վերև՝</u> ավտոմայրուղու կամուրջի հարևանությամբ՝ խիստ աղտոտված</li> </ul>
--	--	--	--	--	--	--

						<p>կարգի</p> <ul style="list-style-type: none"> <li>- <u>Գեղարքերան՝</u> խիստ աղտոտված կարգի:</li> </ul> <p><b>Գետ Լիճք</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- <u>ակունք՝</u> շատ մաքուր կարգի</li> <li>- <u>գեղարքերան՝</u> թույլ աղտոտված կարգի:</li> </ul> <p><b>Գետ Մասրիկ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- <u>ակունք՝</u> բավական մաքուր կարգի</li> <li>- <u>Մասրիկ գյուղի կամուրջի հարևանությամբ՝</u> թույլ աղտոտված կարգի</li> <li>- <u>Գեղարքերան՝</u> չափավոր աղտոտված կարգի:</li> </ul> <p><b>Գետ Կարճաղբյուր</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- <u>ակունք՝</u> ըստ սապրոֆիտ մանրէների՝ թույլ աղտոտված կարգի, ըստ կոլի-ինդեքսի՝ չափավոր աղտոտված կարգի:</li> <li>- <u>գեղարքերան՝</u> ըստ սապրոֆիտ մանրէների՝ թույլ աղտոտված կարգի, ըստ կոլի-ինդեքսի՝ չափավոր աղտոտված կարգի:</li> </ul> <p><b>Գետ Վարդենիկ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- <u>ակունք՝</u> շատ մաքուր կարգի</li> <li>- <u>մինչ կեղտաջրերի թափվելը՝</u> չափավոր աղտոտված կարգի</li> <li>- <u>կեղտաջրերի թափման հարված՝</u> ըստ սապրոֆիտ մանրէների՝ խիստ աղտոտված կարգի, ըստ կոլի-ինդեքսի՝ ուժեղ աղտոտված կարգի,</li> <li>- <u>գեղարքերան՝</u> միանգամայն</li> </ul>
--	--	--	--	--	--	---

						<p>մաքուր կարգի:</p> <p><b>Գետ Արգիճի</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- <u>ակունք</u>' միանգամայն մաքուր կարգի:</li> <li>- <u>գետաբերան</u>' բավական մաքուր կարգի:</li> </ul> <p>Համաձայն Ամբրազենի (Амбразене, 1974) դասակարգման՝ ըստ 37°C -ում 24 ժամվա ընթացքում աճող սապրոֆիտ մանրէների քանակի, հետազոտված գետի տարբեր հատվածների ջրերի որակը բնորոշվում է.</p> <p><b>Գետ Դրախտիկ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- <u>ակունք</u>' դաս I (մաքուր)</li> <li>- <u>Դրախտիկ գյուղից մոտ 100մ ներքև</u>' դաս II (թույլ աղտոտված)</li> <li>- <u>գետաբերան</u>' դաս II (թույլ աղտոտված):</li> </ul> <p><b>Գետ Ձկնագետ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- <u>ակունք</u>' դաս I (մաքուր)</li> <li>- <u>մինչ Ծովագյուղի տարածք մտնելը</u>' դաս I (մաքուր)</li> <li>- <u>գետաբերան</u>' դաս I (մաքուր):</li> </ul> <p><b>Գետ Մարտունի</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- <u>ակունք</u>' դաս I (մաքուր)</li> <li>- <u>մարրման կայանի արտահոսքերի մուտքից մոտ 100մ վերև</u>' դաս II (թույլ աղտոտված)</li> <li>- <u>կեղտաջրերի մեխանիկական մարրման կայանի արտահոսքերի թափման</u></li> </ul>
--	--	--	--	--	--	---



						<p><u>հատված</u>' դաս IV (շատ ուժեղ աղտոտված)</p> <p>- <u>գեղաբերան</u>' դաս III (ուժեղ աղտոտված):</p> <p><b>Գետ Ծակքար</b></p> <p>- <u>ակունք</u>' դաս I (մաքուր)</p> <p>- <u>գեղաբերան</u>' դաս I (մաքուր):</p> <p><b>Գետ Գավառագետ</b></p> <p>- <u>ակունք</u>' դաս II (թույլ աղտոտված)</p> <p>- <u>Նորապուս գյուղից վերև՝ ավտոմայրուղու կամուրջի հարևանությամբ</u>' դաս II - III (չափավոր աղտոտված)</p> <p>- <u>գեղաբերան</u>' դաս II- III (չափավոր աղտոտված):</p> <p><b>Գետ Լիճք</b></p> <p>- <u>ակունք</u>' դաս I (մաքուր)</p> <p>- <u>գեղաբերան</u>' դաս II (թույլ աղտոտված):</p> <p><b>Գետ Մասրիկ</b></p> <p>- <u>ակունք</u>' դաս I (մաքուր)</p> <p>- <u>Մասրիկ գյուղի կամուրջի հարևանությամբ</u>' դաս II (թույլ աղտոտված)</p> <p>- <u>գեղաբերան</u>' դաս II (թույլ աղտոտված):</p> <p><b>Գետ Կարճաղբյուր</b></p> <p>- <u>ակունք</u>' դաս II (թույլ աղտոտված)</p> <p>- <u>գեղաբերան</u>' դաս II (թույլ աղտոտված):</p> <p><b>Գետ Վարդենիկ</b></p>
--	--	--	--	--	--	--

						<ul style="list-style-type: none"> <li>- <u>ակունք</u>' դաս I (մաքուր)</li> <li>- <u>մինչ կեղտաջրերի թափվելը</u>' դաս II- III (չափավոր աղտոտված)</li> <li>- <u>կեղտաջրերի թափման հարված</u>' դաս III (ուժեղ աղտոտված)</li> <li>- <u>գերաբերան</u>' դաս I (մաքուր):</li> </ul> <p><b>Գետ Արգիճի</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- <u>ակունք</u>' դաս I (մաքուր)</li> <li>- <u>գերաբերան</u>' դաս I (մաքուր):</li> </ul> <p><b>Բյուջետային ֆինանսավորման վերաբերյալ</b></p> <p>2017 թվականի համար ՀՀ պետական բյուջեով նախատեսված «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ» ծրագրի շրջանակներում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի բյուջետային ֆինանսավորումը կազմել է 249355,6 հազար դրամ, որը ամբողջովին ֆինանսավորվել է: Ծրագրի շրջանակներում ստացված ֆինանսավորումը 2017 թվականի տասնմեկ ամիսների ընթացքում ծախսվել է «աշխատանքի վարձատրություն» հոդվածով:</p>
--	--	--	--	--	--	--

						<p><b>Անտառտնկման աշխատանքներ</b></p> <p>2017 թվականի ընթացքում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջոցներով պարկի տարածքում իրականացվել է 8.18 հա անտառտնկման և 38644 հատ կողճաշիվային վերականգնման աշխատանքներ:</p> <p>«Սևան» ազգային պարկի տարածքում հիմնվել է 2.5 հա տնկարանային տնտեսություն, որից 1 հա-ը՝ դպրոց հողամաս է: 2018 թվականին նախատեսվում է դպրոց հողամասի ծավալները կրկնապատկել: 2018 թվականին նախատեսվում է նաև հիմնել 3 հա տնկարան՝ 1 հա Սևանի, 1 հա Վարդենիկի և 1 հա Նորատուսի մասնաճյուղերի տարածքներում:</p> <p>Բելառուսի հանրապետության անտառային տնտեսության նախարարության ներկայացուցիչների հետ այցելություն է կատարվել «Սևան» ազգային պարկի Սևանի մասնաճյուղի Ախթամարի տեղամաս, ուսումնասիրվել է 15 հա տարածք, սակայն որոշվել է անտառտնկարկ իրականացնել 9,95 հա-ի վրա: Նախնական պայմանավորվածության համաձայն</p>
--	--	--	--	--	--	---

						<p>Բելառուսի հանրապետությունը տրամադրելու է տնկանյութ: Աշխատանքները նախատեսվում են սկսել 2018 թվականի գարնանը:</p> <p><b>Պահպանություն</b></p> <p>«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահպանության բաժնի աշխատակիցների կողմից 2017թ. ընթացքում կազմվել է 130 իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ, որից՝ 87-ը ապօրինի ձկնորսության և ապօրինի խեցգետնի որսի վերաբերյալ, 10-ը՝ ապօրինի շինարարության, 13-ը՝ ռելիեֆի խախտման, 7-ը՝ ապօրինի ծառահատման, 2-ը՝ ապօրինի աղբաթափման, 1-ը՝ ապօրինի մետաղական տաղավարի տեղադրման և 8-ը՝ ապօրինի արածեցման դեպքերի վերաբերյալ: 130 արձանագրություններից 71-ը ուղարկվել է ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական և ընդերքի տեսչական մարմին: Ստուգայցերի ընթացքում առգրավվել են 313 հատ ձկնորսական ցանց, 99 հատ խեցգետնաորսիչ, 3392 հատ սիգ տեսակի ձուկ, 59 կգ և 337 հատ</p>
--	--	--	--	--	--	---

							<p>խեցգետին: Ձկները հանձնվել են Գավառի մանկատանը, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին, «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ին, Սևանի «Հեքիաթ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի, Մարտունու N1, N2, N3, N4 մանկապարտեզներին, իսկ խեցգետինը կենդանի վիճակում բաց է թողնվել լիճ: Առգրավված ցանցերը և խեցգետնաորսիչները սահմանված կարգով համապատասխան հանձնաժողովի կողմից կոչնչացվեն:</p> <p>(«Սևան» ազգային պարկ) ՊՈԱԿ-ի տարեկան ծավալուն հաշվետվությունը ներկայացվել է ՀՀ բնապահպանության նախարարություն (31 թերթ):</p>
2.8	Սևանա լճի ջրհավաք ավազանում հանքավայրերի շահագործման արդյունքում խախտված հողատարածքների ռեկուլտիվացիա	Տարածքների վերականգնման աշխատանքների նախագծերի մշակում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	2017թ. և շարունակական	Ըստ անհրաժեշտության՝ շրջակա միջավայրի պահպանության դրամազլիսին հատկացված միջոցներով ըստ գույքագրման արդյունքների	ՀՀ բնապահպանության նախարարությունը 2017 թվականին շրջակա միջավայրի պահպանության դրամազլիսին հատկացված միջոցներով հանքավայրերի շահագործման արդյունքում խախտված հողատարածքների ռեկուլտիվացիոն աշխատանքներ չի իրականացրել, ինչը պայմանավորված է ընդերքօգտագործման իրավունքների գործողության ժամկետներով:

							<p>Միաժամանակ հայտնում եմ, որ ռեկուլտիվացիայի ենթակա խախտված հողատարածքների վերականգման աշխատանքներն իրականացնելու համար ՀՀ բնապահպանության նախարարությունը մշակել է «Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգը», որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 2-ի նիստի թիվ 46 արձանագրային որոշմամբ: ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակվել է նաև «Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման հայեցակարգն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը ներկայումս գտնվում է շահագրգիռ գերատեսչությունների հետ համաձայնեցման փուլում:</p>
2.9	«Որոտան-Արփա-Սևան հիդրոհանգույց» ջրային համակարգի հավատարմագրային կառավարման	Արփա-Սևան հիդրոտեխնիկական կառույցի շահագործման և պահպանման իրականացում օրենսդրությամբ սահմանված	ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե		2017-2019թթ.	Արփա-Սևան թունելի պահպանման և շահագործման նպատակով հավատարմագրային կառավարչի պահպանման ծախսերի համար ՀՀ պետական բյուջեով 2017թ. նախատեսվել և հատկացվել է 205.8 մլն. դրամ:	

	իրականացում	նորմերի համաձայն				պետական բյուջեով 2017թ. նախատեսվել է հատկացնել 205.8 մլն դրամ:	
--	-------------	---------------------	--	--	--	--	--